0001, Երևան, Հայաստան
Նալբանդյան 106/1, Սայաթ-Նովա
բիզնես կենտրոն
Հեռախոս՝ +374 44 20 20 48
Է. հասցե՝ info@mediafactory.am
Կայք՝ mediafactory.am

MEDIA FACTORY HETQ

0001, Yerevan,Armenia
106/1 Nalbandyan Sayat-Nova
Business Center
Phone: +374 44 20 20 48
E-mail: info@mediafactory.am
Website: mediafactory.am

ք. Երևան

7 նոյեմբեր, 2022 թ.

Վայոց Ձորի մարզպետ
Արարատ Գրիգորյանին

Հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Հետք Մեդիա Գործարանը հոդված է պատրաստում քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների վերաբերյալ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետեւյալ տեղեկությունները Վայոց Ձորի **Ջերմուկ համայքի ներքոնշյալ բնակավայրերի վերաբերյալ.**

- **Ջերմուկ քաղաք**
- **Կեչուտ գյուղ**

1. **Ըստ քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների մասին ձեռնարկի՝**
   Ապաստարանը - թշնամու կողմից բոլոր տեսակի խոցման միջոցների կիրառման կամ ճառագայթային, քիմիական, մանրէաբանական խոցման գործոններով վթարների և աղետների պայմաններում առանց անհատական պաշտպանական միջոցների մարդկանց երկարատև մնալու համար հարմարեցված, կամ կառուցված ամուր (սովորաբար՝ խորացված), հերմետիկ կառույց է: **Ապաստարանները սարքավորվում են նախամուտքով, օդազտիչ, օդամղիչ սարքավորումներով, ջերմային և լուսային սարքերով, մահճակալներով, ջրամատակարարման ու կոյուղու համակարգերով:**
   1.1. Վերոնշյալ նորմերին համապատասխանող քանի՞ ապաստարան կա **վերոնշյալ ցանկի յուրաքանչյուր բնակավայրում:**

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 8655

1.2. Որքա՞ն է կազմում վերոնշյալ նորմերին համապատասխանող ապաստարանների ընդհանուր մակերեսը **վերոնշյալ ցանկի յուրաքանչյուր բնակավայրի** համար:

2.

2.1. Վերոնշյալ ցանկի յուրաքանչյուր բնակավայրում արտակարգ իրավիճակներում քաղաքացիական բնակչության պատսպարման համար նախատեսված քանի՞ հարմարեցված նկուղային տարածք կա, որը վերահսկվում է մարզպետարանի կողմից:

2.2 **Վերոնշյալ ցանկի յուրաքանչյուր բնակավայրում** արտակարգ իրավիճակներում քաղաքացիական բնակչության պատսպարման համար նախատեսված, հարմարեցված նկուղային տարածքի ընդհանուր մակերեսը որքա՞ն է կազմում:

3. Խնդրում ենք տրամադրել **վերոնշյալ ցանկի յուրաքանչուր բնակավայրում** գտնվող առնվազն մեկ ապաստարանի հասցե:

4. Ըստ բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին որոշման՝ պաշտպանական կառույցներում բնակիչները տեղավորվում են կազմակերպված և արագ՝ կառույցի պարետի (ավագի) ցուցումով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք տրամադրել՝ **վերոնշյալ ցանկի յուրաքանչուր համայնքի** պարետի (ավագի) կոնտակտային տվյալները (անուն-ազգանուն, հեռախոսահամար, զբաղեցրած պաշտոն):

5. 2017-ի տարեսկզբից մինչև 2022-ի նոյեմբերի 7-ը **վերոնշյալ յուրաքանչուր համայնքում** ինչպիսի՞ աշխատանքներ են իրականացվել՝ մասնավորապես սանիտարահիգենիկ և ինժեներատեխնիկական պայմանների բարեկարգումը:

6. **Վերոնշյալ յուրաքանչուր համայնքում** քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների բարեկարգման ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվել վերջին ակտիվ ռազմական գործողություններից (սեպտեմբերի 13-15) հետո մինչ օրս՝ համաձայն ՀՀ ԱԻՆ հանձնարարականի:

Հոդվածը հրապարակվելու է Հետք մեդիա գործարանի կայքում եւ Հետք ինտերնետային թերթում:

Հարգանքով՝
Աննա Հարությունյան, Հետք Մեդիա Գործարանի ուսանող-լրագրող
Հեռախոսահամար՝ 093569808